ԲԵՌԼԻՆՈՒՄ ԳՐՈՒԵՑ ԻՐԱՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ , ՄԱՀԱՓՈՐՁԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԱԿ Ի ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Posted on May 10, 2022 by Keghart



Category: Opinions

Կամքէ անկախ պատճառներով, ուշացումով եւ կարճ մը յապաւումներով կը հրատարակենք ներքոյիշեալ թղթակցութիւնը՝ հայցելով հեղինակին՝ Դոկդ. Ժիրայր Քոչարեանին ներողամտութիւնը:

Դոկդ. Ժիրայր Քոչարեան, Բեռլին, նոյ. 2021

Ցեղասպանութեան ճանաչման յանձնախմբի միջոցառումները 24, 26 , 29 Հոկտ . 2021-ին Բեռլինում, Նեմեսիսի 100 ամեակի առթիւ, որոնք անգամներ յետաձգուել էին Քորոնա համաճարակի պատճառով, մեկնարկեցին հոկտ. 24-ին, նախ «Երկրատարածքի քաղաքական դաստիրակութեան կենտրոնում» - Բեռլինի Հարդենբէրգ Փողոց - Պրոֆ . Թեսա Հոֆմաննի ներածականով եւ նոյն փողոցում տեղի ունեցած գործողութեան՝ Թալաթ Փաշայի պատժի արժանանալու վայրի այցելութեամբ:

Հոկտ. 26-ին, վերը յիշուած կենտրոնում Պրոֆ . Հոֆմաննը մանրամասնօրէն ադրադարձաւ գործողութեան հետ կապուած հանգամանքներին, դերակատար անձերի, վկաների եւ դատավարութեան ժամանակ վկայ Քրիստինէ Թէրզիբաշեանի որդի՝ 94 տարեկան Արմէն Թէրզիբաշեանի ողջոյնի խօսքին, որը առողջական խնդիր ունենալով ի վիճակի չեղաւ անձամբ մասնակցելու միջոցառմանը:

Նեմեսիսի եւ Հարդենբէրգ փողոցի մասին զեկուցեց Դոկտ . Ժիրայր Քոչարեանը: Տիկին Բէա Քերբէքեան Էլերզի կողմից կարդացուեց Դողան Ախանլիի «Մադոնայի վերջին երազը» (2019) եւ «Մօր լռութունը» (2006) վէպերից ցեղասպանութեան հետ առնչուող հատուածներ:

3-րդ միջոցառումը տեղի ունեցաւ Բեռլինի Շառլոթենբուրգ թաղամասի քրէական դատարանի դահլիճ 700-ում , որտեղ 1921-ի յուլիս 2-ին եւ 3-ին, տեղի էր ունեցել Սողոմոն Թէհլերեանի դէմ քրէական դատ, որը եւ պատմութեան գիրկը անցաւ, որպէս «Թալաթ փաշայի դատավարութիւն»: Պրոֆ. Հոֆմաննի ներածականից յետոյ խօսք առաւ «Իրաւունք և մշակոյթի Ֆորում»ի դատական ատեանի նախագահ՝ Դոկտ . Փիքելը: Դատավարութիւնը ներկայացրին մի քանի դերասաններ , որոնց մէջ դեր էր վերցրել նաեւ բեռլինաբնակ Ստեփան Գանթրալեանը:

Հատուածներ Պրոֆ. Թեսա Հոֆմաննի ելոյթից

Լրացաւ 100 ամեակը Բեռլինում տեղի ունեցած քրէական մի դատի , որը ազդակ հանդիսացաւ 1948-ին ՄԱԿի համագումարին: Այդ դատավարութիւնը ունեցաւ խոր տպաւորութիւն Ռաֆայէլ Լեմքինի վրայ, որը թէեւ որպէս Լեմբէրգ քաղաքում իրաւաբանութեան ուսանող, դատավարութեան ընթացքի մասին իրազեկւում էր մամուլից: Այդ ճակատագրական դէպքի մասին գրում է Լեմքինը իր կենսագրականում: «Դատարանը ազատ արձակեց Թէհլերեանին, որը մարդկային բարոյական կարգը բարձր էր գնահատում .... Այդ ժամանակից սկսեցի մտածել անմեղ մարդկանց

սպանութիւնների մասին: Թէպէտ ես չունէի բոլոր [illegible] զգում էի, որ մի օրէնք պիտի սահմանուի, որպէսզի ցեղային կամ կրօնական սպանութիւնները հրահրած ոճրագործները պատժուեն: Եթէ այդ առնչութեամբ օրէնքներ լինէին, պետական մեծ ոճրագործութիւններ, ինչպէս Հայերի և Օսմանեան սուլթանութեան միւս քրիստոնեայ ժողովուրդների նկատմամբ կամ խափանուելու էին և կամ ոճրագործներն էլ պատժուելու էին»:

Լեմքինը իր Հայդելբէրգեան իրաւագէտ պրոֆեսորից տեղեկացաւ, որ գոյութիւն չունի այնպիսի օրէնք, որով դատապարտուէին իր իսկ քաղաքացիների նկատմամբ մի պետութեան ոճրագործութիւնները:

Լեմքինը նկատեց այդ պակասը: «Եթէ Թէհլերեանը ահաբեկի մէկին, այդ արարքը համարուում է ոճրագործութիւն, բայց ոճրագործութիւն չէ մի կեղեքող—իշխանաւորի համար, երբ նա միլիոնաւոր մարդկանց է կոտորում: Այս անտանելի հակասութիւն է»:

Լեմքինի կեանքի մեծ գործը եղաւ նախագծի իրականացնումը որպէս միջազգային համաձայնագիր, որպէսզի խափանի ցեղասպանութիւնը և պատժի ցեղասպաններին: Նրա ջանքերը իրականացան միայն 2-րդ աշխարհամարտից յետոյ՝ 1948-ին:

Բեռլինի դատավարութիւնը եղաւ առաջինը, որտեղ Հայոց ցեղասպանութիւնը դարձաւ խնդրոյ առարկայ: Ի հարկէ պրուսական արդարադատութեան և արտաքին գործոց նախարարութիւնները ունէին մեծ շահագրգռուածութիւն, որ Թէհլերեանի դէմ դատավարութիւնը արագ և առանց աղմուկի ունենայ իր աւարտն և այդ պատճառով էլ դատավարութիւնը տևեց միայն երկու օր:

Հայկական ցեղասպանութիւնը վերապրած երկու վկաների ցուցմունքները՝ Գրիգորիս Պալակեան և Քրիստինէ Թէրզիբաշեան, հաստատեցին Ս. Թէհլերեանի վկայութիւնները

https://www.youtube.com/watch?v=F57pgpr_jdw

Տարածուած է, թէ քրէական դատարանը Ս. Թէհլերեանին ազատ արձակեց, քանի որ նա անմեղսունակ էր: Սա ճիշտ չէ: Ուշադրութիւն դարձնենք երդուեալների աւագի յայտարարութեանը:

«Պատուով և խղճով հանդէս եմ գալիս երդուեալների Վճիռով: Ամբաստանեալ Սողոմոն Թէհլերեանը մեղաւո՞ր է 15 մարտ 1921-ին, Շառլոթենբուրգում դիտաւորութեամբ մի մարդու մարդու, Թալաթ Փաշային սպանելու մէջ: Ոչ , Օթթօ Հայնիքէ, երդուեալների աւագը»:

Լիայոյս ենք ենք, որ շուտով բոլոր ելոյթների լրիւ բնագիրը, գոնէ գերմաներէնով, լոյս կը տեսնի:

There are no comments yet.